«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունը հայոց լեզվի և գրականության դասավանդման գործընթացում

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Արմենուհի Խալաթյան

Ուսումնական հաստատություն՝ Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն _____3

ՈՒսումնական ծրագրի ինտեգրում_____5

Ինտեգրումը հայոց լեզվի և գրականության դասավանդման գործընթացում----------8

Եզրակացություն----------13

Օգտագործված գրականության ցանկ----------25

Ներածություն

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը, համընթաց գնալով եվրոպական կրթական չափանիշներին, ձգտում է ստեղծել յուրահատուկ ազգային կրթահամակարգ, որ միաժամանակ կարողանա դիմակայել համաշխարհայնացման մարտահրավերներին: Ազգային կրթահամակարգի առանցքը կազմում է մայրենի լեզվի ուսուցումը, որ միտված է սովորողներին զինելու ոչ միայն կապակցված գրավոր և բանավոր խոսք կառուցելու որոշակի հմտություններով, այլև նրանց ապահովելու տեսական գիտելիքներով, որ հնարավորություն կընձեռի լեզվական առարկայական իրողություններից անցնելու լեզվական վերացարկվածության:

Թեմայի ուսումնասիրման արդյունավետությունը պայմանավորված է հայոց լեզվի և գրականության դասընթացի յուրացման գործընթացում միջառարկայական և ներառարկայական կապերի ստեղծմամբ, փոխգործուն, աշակերտակենտրոն մեթոդների, դերային և մտածողական խաղերի կիրառմամբ, ուսումնասիրվող առարկայի նկատմամբ հետաքրքրության բարձրացմամբ:

Ինտեգրման ուսուցման վերաբերյալ գաղափարներ են արտահայտել մի շարք մանկավարժագետներՅ. Ա. Կոմենսկին, Յ. Հ. Պեստալոցցին , Վ. Սուխոմլինսկին, Ի. Պ. Պոդլասին: Ժամանակակից մանկավարժության մեջ ինտեգրված ուսուցումը ներկայացվում է նոր դիտարկումներով: Այն իր մեջ ներառում է թե՛ զարգացման սահմանափակ հնարավորություններ ունեցող սովորողներին, թե՛ միջառարկայական կապերի կիրառումը և թե՛ բազմահամակազմային դասարաններում իրականացվող գործընթացները:

Ինչպես դիտարկում է Ե. Ա. Եկժանովան, 'Ինտեգրված ուսուցումը, հիմնվելով հատուկ և ընդհանուր կրթության սկզբունքների վրա, պետք է ունենա զարգացնող, դաստիարակող բնութագիր, որը ենթադրում է սովորողների բարոյական գաղափարների, վարքի համարժեք ձևերի մշակում՝ բոլոր մասնակիցների ներառմամբ կրթական գործընթացում'/1, 52/:

Հետազոտության նպատակն է ցույց տալ, որ հայոց լեզվի և գրականության դասավանդման գործընթացում ինտեգրումը՝

ա/ ծառայում է սովորողների գիտելիքների հարստացմանը: Գիտելիքները կառուցվում են ուսուցիչների և սովորողների համատեղ անխոնջ աշխատանքի շնորհիվ,

բ/ նպաստում է հետազոտական հմտությունների զարգացմանը,

գ/ նպաստում է անձնային հարաբերությունների զարգացմանը,

դ/ պահանջում է նոր՝ փոխներգործող մեթոդների, մեթոդական ինքնատիպ հնարների, հաղորդակցական, տեղեկատվական, ուսուցման տեխնիկական միջոցների, կազմակերպական յուրահատուկ ձևերի և տարաբնույթ դասատիպերի կիրառում:

ե/ ինտեգրված ուսուցման վերջնարդյունքում սովորողների մոտ կզարգանա հմտություններ, կարողություններ, քննադատական վերլուծություն, ստեղծագործական մտածողություն:

Հետազոտության ծավալն ու կառուցվածքը: Հետազոտությունը բաղկացած է ներածությունից, 2 ենթավերնագրից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, ծավալը համակարգչային 25 էջ է:

1. ՈՒսումնական ծրագրի ինտեգրում

Ինտեգրված դասը դասի հատուկ տեսակ է, որն իր մեջ ներառում, միավորում է մեկ հասկացության՝ ուսուցման ժամանակ մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը: Ինտեգրված ուսուցման ծրագրերը կազմվում են այնպես, որ մի առարկայից գիտելիքները հիմնվում են մեկ այլ կամ մի քանի այլ առարկաներից վերցրած գիտելիքների վրա: Սակայն ինտեգրումը տարբեր առարկաներից գիտելիքների տարանջատված միավորում չէ, այլ սերտորեն փոխկապակցված ամբողջություն /2, 59/:

Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ տարբերակվում են միավորված (ինտեգրված) ծրագրերի հետևյալ տեսակները.

● բազմառարկայական /multidisciplinary/,

● միջառարկայական /interdisciplinary/,

● անդրառարկայական /trans disciplinary/ /3,16-17/:

Բազմառարկայական մոտեցման դեպքում վերցվում է թեման, ընտրվում են այն առարկաները, որոնք անդրադառնում են տվյալ թեմային՝ դասավանդման ընթացքում ուսումնասիրելով երևույթը տարբեր գիտությունների ընկալումների տեսանկյունից:

Առաջնորդվելով այս մոտեցմամբ՝ ուսուցիչներն առարկաների չափորոշիչները մշակում են մի թեմայի շուրջ՝ կարևորելով տարբեր առարկաների շրջանակներում սովորողների ստացած գիտելիքները:

Միջառարկայական մոտեցման դեպքում ուսումնասիրվող թեման դառնում է դասավանդման առանցքը, որին տարբեր առարկաներ մատուցում են իրենց արդյունքները: Ի տարբերություն բազմառարկայական մոտեցման՝ այս դեպքում շեշտը առանձին առարկաների թեմաներից տեղափոխվում է դեպի այդ առարկաների համար ընդհանրական թեմաները և կենտրոնանում առարկաների ընդհանրությունների վրա:

Անդրառարկայական մոտեցման դեպքում թեման դուրս է գալիս առարկաների

սահմաններից ՝ լիովին ջնջելով առանձին առարկաների սահմանները: Նման ինտեգրում է տեղի ունենում նախագծային ուսումնառության դեպքում: Սովորողները հետապնդում են կոնկրետ խնդիր:

Ինտեգրված դասի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ և օգնող՝ նպաստելով նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը: Ինտեգրված դասերը կարող են միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ ու մեթոդներ: Օրինակ՝ կարելի է ինտեգրել առարկաների բովանդակությունը՝ պահպանելով առաջատար առարկայի ուսուցման մեթոդները, ինչպես նաև կարելի է ինտեգրել տարբեր առարկաների ուսուցման մեթոդիկաները՝ պահպանելով մեկ առարկայի բովանդակությունը:

Սակայն ինտեգրված դասեր ուսուցիչներն այդքան էլ հաճախ չեն կիրառում: Դրանք հիմնականում կիրառվում են հետևյալ դեպքերում.

1. երբ հայտնաբերվում են միևնույն նյութի կրկնությունը տարբեր ուսումնական առարկաներում և դասագրքերում,

2. թեմայի ուսումնասիրության ժամանակի խնայողության դեպքում՝ ցանկանալով օգտվել մեկից ավելի առարկաների պատրաստի բովանդակությունից,

3. այնպիսի ընդհանրացված հասկացությունների (շարժում, ժամանակ, զարգացում, մեծություն և այլն), օրենքների, սկզբունքների ուսումնասիրության ժամանակ, որոնք ներառում են մարդկային կյանքի և գործունեության ամենատարբեր ասպեկտներ,

4. երբ ուսումնասիրվող նյութը դուրս է գալիս ուսուցանվող առարկայի ծրագրի շրջանակներից,

5. առարկայի դասավանդման ժամանակ պրոբլեմադիր և զարգացնող ուսուցում իրականացնելու ժամանակ /6,135/:

Իհարկե, կան նաև ինտեգրված դասերի կիրառման այլ դրդապատճառներ:

Մինչ ինտեգրված դաս անցկացնելը ուսուցիչը նախ դիմում է իր այն ուսուցչին, ում դասավանդած առարկան պետք է ինտեգրվի իր առարկայի հետ: Երկու ուսուցիչներ պարզում և որոշում են իրենց առարկաների համատեղ

հետաքրքրությունը: Ինտեգրված դասի ամենախոցելի տեղը ուսուցիչների փոխգործունեության ճիշտ կազմակերպումն է. նրանցից յուրաքանչյուրի գործողությունների հաջորդականության ու ընթացքի արդյունավետ ապահովումը: Ընդ որում՝ նրանց փոխհարաբերությունները կարող են տարբեր լինել. յուրաքանչյուրն ունի հավասար մասնակցության իրավունք կամ նրանցից մեկը հանդես է գալիս որպես առաջատար, իսկ մյուսը՝ խորհրդատու, կամ ամբողջ դասը կարող է վարել ուսուցիչներից մեկը, իսկ մյուսները պարզապես խաղան ակտիվ հյուրի դեր /4, 64/:

2. Ինտեգրումը հայոց լեզվի և գրականության դասավանդման գործընթացում

Հայոց լեզուն և գրականությունը կրթության բովանդակության տիրույթ է, որն ապահովում է սեփական մտքերը հայերեն բանավոր և գրավոր գրագետ խոսքով արտահայտելու, ազատ հաղորդակցվելու, կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դեպքում՝ համապատասխան այլընտրանքային հաղորդակցման միջոցով, հայ և արտասահմանյան գրականության ստեղծագործություններ, ինչպես նաև ուսումնական այլ առարկաներ ուսումնասիրելու կարողության, ինքնաճանաչողության, աշխարհաճանաչողության, լեզվամտածողության, քննադատական, հուզականպատկերավոր մտածողության ձևավորումը, զարգացումը և կատարելագործումը ողջ կյանքի ընթացքում.

«Հայոց լեզու և գրականություն» բնագավառը հանրակրթական ընդհանուր պետական ծրագրի 1-6-րդ դասարաններում ներկայացվում է հայոց լեզուն և գրականությունը ներկայացնող մեկ ինտեգրված առարկայով, 7-12-րդ դասարաններում հայոց լեզուն և գրականությունն ուսումնասիրող առանձին առարկաներով /9/:

Մայրենի լեզուն դպրոցական կրթության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում, քանի որ միաժամանակ և՛ ուսումնասիրության առարկա է, և՛ մյուս առարկաների յուրացման միջոց: Մայրենի լեզվի մյուս յուրահատկությունն էլ այն է, ու այն ներառում է երկու կողմ՝ բուն լեզվի իմացություն, այսինքն՝ այդ լեզվով հաղորդակցվելու, տարբեր բնույթի գրավոր ու բանավոր շարադրանք հյուսելու կարողություն, և լեզվի քերականական կառուցվածքի իմացություն, որը ենթադրում է տեսական, լեզվաբանական որոշակի գիտելիքներ: Հանրակրթական դպրոցում «Հայոց լեզու» առարկայի դասավանդումը զուգակցում է այս երկու կողմը, սակայն առաջնությունը տրվում է լեզվի գործնական կիրառության (լսելու, խոսելու, կարդալու, գրելու) կարողությունների զարգացմանը, իսկ տեսական գիտելիքները տրվում են նվազագույն չափով, որքանով դրանք կարող են նպաստել նշված խնդրի լուծմանը:

Մանկավարժության և հայ մեթոդիկայի պատմությունից հայտնի է, որ տարբեր ժամանակներում տարբեր պահանջներ են ներկայացվել մայրենի լեզվի դասընթացին, կառուցվածքին ու բովանդակությանը՝ երբեմն այն դարձնելով խիստ տեսական, երբեմն էլ՝ խիստ գործնական, երբեմն խիստ ընդգծված ձևով գերագնահատելով

քերականության տեղն ու դերը մայրենի լեզվի դասավանդման ընթացքում, իսկ երբեմն էլ ծայրահեղ թերագնահատելով:

Հայոց լեզվի և գրականության ուսումնական բնագավառում քերականության դերի խիստ բարձրացումը և դրա բացարձակ անտեսումը հավասարապես վտանգավոր են և անիմաստ: Մայրենի լեզվի մեթոդիկայի երախտավորներից պրոֆ. Ա. Տեր-Գրիգորյանի կարծիքով՝ «լեզվական գիտելիքն այն չափով միայն պետք է տեղ ունենա մայրենի լեզվի տարրական դասընթացում, որքանով այն հասանելի է երեխայի ըմբռնմանը և որչափով այն նպաստում է խոսքի ուսուցումը գիտակցական հիմքերի վրա դնելուն, զարգացնում է երեխայի տրամաբանական մտածողությունը, նրանց մեջ վերացարկում կատարելու կարողություն է մշակում» /5, 272/:

Ցանկացած դաս որոշակի ամբողջություն է, որի մասերը սերտորեն կապված են միմյանց: Դասի ամբողջականությանն ու ներդաշնակությանը ուսուցիչը կարող է հասնել միայն այն ժամանակ, երբ նա հստակորեն պատկերացնում է դասի թեման և խնդիրները, գնահատում է նյութի դասավանդման համար ընտրված բնագրի ուսուցողական ու դաստիարակչական արժեքը, գիտակցում է լեզվական նյութի հեշտ յուրացման համար ընտրված վարժությունների և առաջադրանքների կարևորությունը և դրանց առաջադրման հերթականությունը, կազմում է դասի պարզ և կոնկրետ պլանը, որով և առաջնորդվում է դասի ընթացքում: Սակայն դասի ներդաշնակությունը պայմանավորված է և՛ ուսուցչի՝ դասին լավ պատրաստված լինելով, և՛ սովորողների՝ ուսման հանդեպ ունեցած մոտիվացմամբ: Իսկ երեխային հետաքրքրելու ու նրան ակտիվ ուսումնառության մեջ ներգրավելու լավագույն միջոցը սովորողների հետաքրքրությունից և նախասիրությունից բխող ուսումնական պրոցեսի կազմակերպումն է: Ժամանակակից մանկավարժագիտության մեջ ինտեգրումը սովորողի կողմից կոնկրետ որևէ երևույթի կամ բնագավառի ամբողջական ընկալման ձևավորումն է, որն իրականացվում է մասերը մի ամբողջի մեջ միավորելու և շրջապատի ու բնության երևույթների վերաբերյալ համապարփակ ու ամբողջական պատկերացում ձևավորելու ճանապարհով:

Մայրենիի միասնացված յուրաքանչյուր դասի ընթացքում ուսուցիչը պիտի ապահովի գիտելիքի ինտեգրման բազմաթիվ դրվագներ: Այդ ինտեգրումը կարող է հանդես գալ ինչպես ներառարկայական, այնպես էլ միջառարկայական կապերի դրսևորմամբ: Վերջինիս ապահովումը լայն հնարավորություն է բացում աշակերտի անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացման համար, քանի որ ժամանակակից պատկերացմամբ դպրոցը երեխային ոչ միայն պետք է սովորեցնի մտածել և գրագետ խոսել, այլև իմացածը կյանքում կիրառել: Մայրենիի միասնացված դասընթացի

միջոցով խնդիր է դրվում ապահովելու հայոց լեզվի ուսուցման՝ առարկայական չափորոշչով սահմանված նպատակներից մեկը, այն է՝ «սովորողի մեջ ժամանակակից գրական հայերենի նորմային համապատասխան խոսք կառուցելու մշակումը, իր խոսքը վերահսկելու, բարբառային, ժարգոնային արտահայտություններից մաքրելու, մայրենի լեզվով ամենատարբեր բնույթի տեքստեր և գրականություն կարդալու և ինքնուրույն հասկանալու կարողությունների զարգացումը» /6, 1/:

Միջին դպրոցի մայրենիի 5-6-րդ դասարանների միասնացված (ինտեգրված) ուսուցմամբ դասագրքերով տարվող աշխատանքը սովորողների առաջ բացում է գիտելիքների ու հմտությունների ձեռքբերման և դրանց կիրառման նոր հնարավորություններ: Մայրենիի դասագրքերում դասը ներկայացված է համալիր եղանակով՝ մեկ ամբողջության մեջ ներառելով ընթերցանության նյութը, տեքստի վրա կատարվող աշխատանքը, գրականագիտական տեղեկությունները, լեզվական գիտելիքը և համապատասխան գործնական վարժությունները: Միասնացված դասն առաջին հերթին ապահովում է քերականության և կենդանի լեզվի կապը, որը կարևոր նշանակություն ունի 5-6-րդ դասարաններում նախատեսված ծրագրային նյութի սահմաններում՝ հնչյունաբանությունից և բառագիտությունից ուսուցանվող լեզվական հասկացությունների գործնական արժեքը ընդգծելու համար: Մյուս կողմից էլ՝ մայրենիի միասնացված ուսուցմամբ լայն հնարավորություն է բացվում սովորողի սոցիալական հմտությունների զարգացման համար՝ նրան վարժեցնելով հետազոտական, ինքնուրույն ստեղծագործական աշխատանքներ կատարելու: Նշված սկզբունքով ուսուցման նպատակներին հասնելու համար ժամանակի հրամայական է դառնում նոր մոտեցումների մշակման անհրաժեշտությունը և՛ ներառարկայական, և՛ միջառարկայական ինտեգրման շրջանակում:

Հայոց լեզվի և գրականության ինտեգրմանը զուգահեռ ուսուցման արդյունավետությանը խիստ նպաստում է հարակից առարկաների, արվեստի ճյուղերի համադրմամբ նյութի մատուցումը: Եթե ընթացիկ ծրագրային դասանյութն ունի աշխարհագրության, հայրենագիտության, պատմության, երաժշտության, արվեստի մյուս բնագավառների հետ աղերսներ, ապա նյութի դասավանդման ընթացքում ուսուցիչն իր ուսուցման զինանոցում պիտի ամբարի ու ժամանակին օգտագործի միջառարկայական ինտեգրման հնարավորությունները՝ ուսուցման ժամանակակից մեթոդների ու մեթոդական հնարների ճիշտ և տեղին գործադրմամբ՝ միշտ շեշտը դնելով գործնականության և ակտիվության սկզբունքի վրա: Ներկայացնենք մեր փորձից վերցված հետաքրքիր մի հանձնարարություն, երբ ուսուցչի ուղղորդմամբ աշակերտները կարդում են բնանկար կամ նկարագրություն

պարունակող երկը, վերլուծում, դատողություններ անում և լրացնում «Քառաբաժան» աղյուսակը: Օրինակ՝ 7-րդ դասարանի աշակերտները Նաիրի Զարյանի «Հայրենի տուն» բանաստեղծության վերլուծությամբ «Քառաբաժան» աղյուսակը լրացնում են այսպես.

Ի՞նչ տեսա: Երազ, հայրենի տուն, մայր, առու, մանկության երկինք, հինավուրց ծառ…	Ի՞նչ լսեցի: Հինավուրց ծառի խշշոց …
Ի՞նչ զգացի: Կարոտ, ափսոսանք…	Նոր վերնագիր «Անուշ երազ» «Տեսիլք»

Հաջորդ փուլում աշակերտները կերպարվեստի ուսուցչից հանձնարարություն են ստանում նկարելու և գույների օգնությամբ ամբողջացնելու բնագրի մեջ ամփոփված մտքերը, ապա լրացրած աղյուսակի ու բանավոր վերլուծության շնորհիվ դասանյութը վերարտադրել նկարելով:

Միջին և ավագ դասարանների դասագրքերում շատ են այնպիսի դասանյութերը, որոնք հնարավոր չէ անցնել առանց աշխարհագրության, պատմության հետ միջառարկայական կապեր ստեղծելու, օրինակ՝ Վ.Դավթյանի «Լիճը», Վ.Անանյանի «Սևանա լիճը», Մ.Ղուկասյանի «Ո՞ւր է կղզյակը Սևանա», «Սևանա լիճը ըստ հանրագիտարանի», Ս.Կուրտիկյանի «Գեղամա լեռներ, Գեղամա ծով», «Նոյ նահապետի տապանը Արարատի վրա» (ըստ Աստվածաշնչի), Ե. Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի», Դ. Դեմիրճյանի «Ավելորդը», Դ. Դեմիրճյանի «Վարդանանք», Ռաֆֆու «Խենթը», Ռաֆֆու «Սամվել», Հ. Թումանյանի «Փարվանա», Պ. Դուրյանի «Լճակ», Ա. Իսահակյանի «Սաադիի վերջին գարունը», Բակունցի «Ծիրանի փողը», Պ. Սևակի «Հայաստան», Կ. Զարյանի «Նավը լեռան վրա», Շ. Շահնուրի «Նահանջը առանց երգի», Հ. Շիրազի «Արարատին», Հ. Սահյանի «Որոտանի եզերքին» :

Հետաքրքիր է առաջադրանքի այն ձևը, երբ ուսուցիչը պահանջում է համացանցից ՏՀՏ-ների կիրառմամբ կամ «Աշխարհագրություն» առարկայի դասընթացից ներկայացնել համապատասխան տեղեկատվություն՝ այն զուգորդելով արձակ կամ չափածո երկի կամ կտավի հետ, ինչի արդյունքում հնարավոր է դառնում ինտեգրել այս երկու առարկաները, որի շնորհիվ աշակերտին հաղորդվող աշխարհաճանաչողական տեղեկությունները սովորողի մեջ համապարփակ պատկերացումներ են ձևավորում կոնկրետ երևույթի կամ բնագավառի վերաբերյալ՝

նրան տալով կյանքում պիտանի և պահանջված գիտելիք, ինչին աշակերտը հասնում է հետազոտական աշխատանք կատարելու ճանապարհով:

Մայրենիի դասընթացում ներառարկայական ինտեգրման արդյունավետությանը նպաստող պայման է ժամանակակից կամ ինտերակտիվ մեթոդների ու մեթոդական հնարների կիրառումը**:**

Որպես ուսուցման վերջնարդյունք՝ սովորողներն ուսուցչի օգնությամբ կբանաձևեն գիտական և գեղարվեստական խոսքի առանձնահատկությունները: Ինչ խոսք, մայրենիի դասագրքերում ինտեգրված դասանյութերը ուսուցչի ստեղծագործական մտքի դրսևորման համար լայն ասպարեզ են բացում, քանի որ յուրաքանչյուր նյութի ուսուցման ընթացքում ուսուցիչն ինքն է որոշում, թե տվյալ բնագրի շրջանակներում ինչ տիպի ինտեգրում պիտի կազմակերպի՝ դրանով իսկ պարարտ հող նախապատրաստելով ակտիվ ուսումնառության համար:

Հայոց լեզվի և գրականության դասերին լեզվական նյութի արդյունավետ յուրացման լավագույն գործիքներից մեկը ՏՀՏ-ների կիրառումն է: Փորձը ցույց է տվել, որ լեզվական նյութի ուսուցման ժամանակ համակարգիչների կիրառումը ոչ միայն տեղին է ու նպատակահարմար, այլև ուսուցման այս ձևի հիմքում դրվում են սովորողի հետաքրքրությունն ու դրա բավարարման ժամանակակից պահանջմունքը: Այս տեսակետից բացառիկ են ինտեգրման մեթոդով ստեղծված համակարգչային խաղերն ու վարժությունները, որոնք թույլ են տալիս երեխայի մեջ զարգացնել վերացական, տրամաբանական, օպերատիվ մտածողություն, վերլուծելու և կանխատեսելու հստակ հնարավորություններ /7, 2/:

Այժմ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումն ուսուցման մեջ դառնում է մշակույթի իրական մասնիկ, և ժամանակակից դպրոցներում դրանց ներդրումը պարտադիր է ու անխուսափելի /8, 50/:

Եզրակացություն

Այս թեման ուսումնասիրելիս մենք հանգեցինք այն եզրակացության, որ ինտեգրումը հայոց լեզվի և գրականության դասավանդման գործընթացում արդյունավետ է իրականացնել: Այն ուսուցչին ինքնահաստատման և ինքնաարտահայտման հնարավորություն է տալիս, որն էլ իր հերթին օգնում է աշակերտների ունակությունների բացահայտմանը, քննական մտածողության զարգացմանը

Ինտեգրված դասերը շատ հետաքրքիր, ուսուցանող են, օգնում են ավելի արագ ու դյուրին սերտել թեմաները:

Ինտեգրված ուսուցման իրականացման արդյունքում սովորողների համար պայմաններ են ստեղծվում՝ կիրառելու իրենց գործնական հմտությունները, ինքնադրսևորվելու՝ միաժամանակ ձեռք բերելով կայուն, բազմակողմանի գիտելիք:

Ինտեգրված դասը հնարավորություն է ընձեռում աշակերտներին սովորել առանց առարկայական սահմանափակումների: Ինտեգրված դասապրոցեսը հնարավորություն է տալիս աշակերտներին ձեռք բերել և օգտագործել գիտության տարբեր բնագավառների հիմնական գիտելիքներ՝ զարգացնելով արդյունավետ ուսումնառություն :

Ինտեգրված դասերը հզոր խթան են հանդիսանում վերլուծելու, համեմատելու, որոնելու օբյեկտների ու երևույթների միջև կապը:

Ինտեգրված ուսուցումը , ապահովելով տարբեր առարկաների գիտելիքների համակցումը, նպաստում է հետազոտական հմտությունների, ստեղծագործական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Ուսուցման արդյունավետությունը մեծապես կախված է յուրաքանչյուր դասի արդյունավետությունից: Առանց լավ մտածված մեթոդների դժվար է ապահովել ծրագրային նյութի իմացությունը: Դրա համար էլ անհրաժեշտ է օգտագործել այնպիսի մեթոդներ և միջոցներ, որոնք կօգնեն ներգրավել աշակերտին սովորելու աշխատանքին, կօգնեն նրան ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ, կզարգացնեն մտածողությունն ու երևակայությունը:

Ինտեգրված ուսուցման առանձնահատկություններ են.

- զարգացնել երեխաների վերաբերմունքը, հմտությունները և գիտելիքները,

- կապեր հաստատել ուսումնական ծրագրի բոլոր առարկաների միջև, գործունեություններ, որոնք ապահովում են մի շարք ունակություններ ,
- կազմակերպել այնպիսի դասեր, որոնք նախաձեռնված և ուղղորդված են թե՛ ուսուցիչների և թե՛ սովորողների կողմից,
- ստեղծել սովորողների քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացման համար համապատասխան միջավայր ,
- համադրել առարկաները ,
- օգտագործել նախագծեր ուսումնառության ընթացքում,
- խրախուսել բացի դասագրքից այլ աղբյուրների օգտագործումը,
- տալ ինքնագնահատման և փոխադարձ գնահատման հնարավորություն:

Հավելված

Ինտեգրված դաս

Առարկան՝ գրականություն

Երկրորդային առարկաները՝ Հայոց պատմություն, աշխարհագրություն

Դասարանը՝ 7-րդ

Թեման ՝ «Ավելորդը» պատմվածքը

ՍՈՎՈՐՈՂԸ ԿԻՄԱՆԱ՝

- ի՞նչ է պատմվածքում ծավալվող դեպքերի և գործողությունների զարգացման ընթացքը՝ դիպաշարը (սյուժեն),
- «Ավելորդը» պատմվածքի բովանդակությունը,
- պատմվածքի ժանրային առանձնահատկությունները:

ԿԿԱՐՈՂԱՆԱ՝

- որոշել պատմվածքում ծավալվող դեպքերի և գործողությունների զարգացման ընթացքը՝ ելնելով դիպաշարից (սյուժեից),
- կարդալ ստեղծագործությունը, մտապահել ու վերարտադրել,
- ընդհանրացնել և հակիրճ ձևակերպել ստեղծագործության հիմնական գաղափարը,
- համառոտ ներկայացնել «Ավելորդը» պատմվածքի դիպաշարը,
- գնահատել սեփական անձը և վստահություն ձեռք բերել իր ուժերի նկատմամբ,
- անել կարճ գրավոր մեկնաբանություն գեղարվեստական և իմաստային տեսակետից իրեն հետաքրքրող հատվածների մասին:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ՝ «Բազմանիստ», «Դասախոսություն», «5-րոպեանոց շարադրանք»:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ՝ Դասագիրք, քարտեր, գրիչներ, թուղթ:

ԴԱՍԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ՝ Կարողությունների և հմտությունների ձևավորման դաս:

ԽԹԱՆՈՒՄ: Դասն սկսվում է ‹‹Քելե՛ լաո›› երգի ունկնդրմամբ:

Այս փուլում կիրառվում է **«Բազմանիստ»** մեթոդը՝ սովորողներին ակտիվացնելու և կենտրոնացնելու համար, ապա սահուն անցում կատարվում նոր նյութի ուսումնասիրմանը:

Մեթոդն արդյունավետ է այն ժամանակ, երբ պահանջվում են կարճ, համառոտ բառերի, հատկանիշների, ցուցանիշների թվարկումներ: Խմբային քննարկումների նման ձևով կազմակերպումն ապահովում է ակտիվություն, աշխուժություն, թարմություն, հետաքրքրություն:

Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է «Ավելորդը» բառով բազմանիստ կառուցել: Բազմանիստը կարող է ունենալ հետևյալ տեսքը.



Սովորողներին առաջարկվում է սկզբնաբառով և վերջնաբառով կազմել մեկ նախադասություն:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ: «Կարճ դասախոսություն» մեթոդով ուսուցիչը ներկայացնում է, թե ինչ է դիպաշարը (սյուժե): Այս պատմվածքը **փոքր** ծավալի արձակ ստեղծագործություն է՝ բոլոր մանրամասներով: Միաժամանակ նաև պատկերացում է տալիս **պատմվածք** և **դիպաշար** հասկացությունների մասին:

Ինչպես հայտնի է նախորդ դասից, **պատմվածքը** գրականության պատմողական ժանրերից մեկն է, սյուժե ունեցող փոքր ծավալի արձակ ստեղծագործություն: Պատմվածքի մեջ նկարագրվում է կյանքի մի դեպք, դրվագ՝ կապված մեկ կամ մի քանի հերոսների հետ: Պատմվածքի հիմքում հիմնականում ընկած է կենսական որևէ փաստ, իրական դեպք: Պատմվածքի մեջ սովորաբար պատկերվում է միայն մի քանի դրվագ հերոսի կյանքից:

Վեպի համեմատությամբ պատմվածքն ընդգրկում է կյանքի ավելի նեղ շրջանակ, այստեղ քանակով ավելի քիչ են կերպարները, սահմանափակ՝ դեպքերն ու գործողությունները:

Ապա մանրամասնում է, որ գրականության մեջ գործողությունների զարգացումը, իրադարձությունների ընթացքը, պատմական, դրամատիկ և քնարավիպերգական

երկերում կոչվում է դիպաշար (սյուժե): Սյուժեն (գլխավոր և երկրորդական սյուժետային գծերի հետ մեկտեղ) երկի բովանդակությունը մարմնավորող հիմնական միջոցներից մեկն է, որն արտացոլում է տվյալ պատմական ժամանակաշրջանը, ազգային ու սոցիալական հանգամանքները, գրողի հուզական-գաղափարական վերաբերմունքը կյանքի բնութագրական կողմերի և իրականության նկատմամբ:

Սյուժեի միջոցով է դրսևորվում կերպարների, նրանց բնավորության ու ներքին էության զարգացման պատմությունը: Իր ողջ անկրկնելիությամբ և ինքնատիպությամբ սյուժեն ստեղծագործության ձևի հիմնական կողմն է: Սյուժեի զարգացման հիմքը կոնֆլիկտն է՝ հերոսների բախման միջոցով հասարակական հակադիր ուժերի պայքարի բացահայտումը: Էպոսի պատմական զարգացման վաղ շրջանում նրա սյուժեն կառուցվել է դեպքերի համակցության ժամանակային, ժամանակագրական սկզբունքով:

Պատմության ուսուցիչը ներկայացնում է «Ավելորդը» պատմվածքի ստեղծման պատմությունը: «Ավելորդը» պատմվածքում պատկերված է Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակներին վերաբերող կյանքի մի դրվագ: Կովկասյան ճակատի սկզբնական փուլի ամենանշանավոր իրադարձությունը Սարիղամիշի ճակատամարտն էր, որն ընթացավ 1914թ. դեկտեմբերի 3-ից մինչև 1915 թ. հունվարի 5-ը: 1914 թ-ի դեկտեմբերի 14-ին թուրքերն առաջ էին շարժվում Սարիղամիշի ուղղությամբ: Ռուսական բանակը թուրքերի հետ բախվել է հայկական սահմանին: Ռուսները նրանց առաջխաղացումը կասեցնում են, իսկ դեկտեմբերի 22-ին հասցնում ջախջախիչ հարված:

Թուրքական երրորդ բանակը , որի հրամանատարությունն ստանձնել էր Էնվեր փաշան, կարողացավ գրավել Օլթին, Արդվինն ու Արդահանը, ընդհուպ մոտենալ Բաթումին և Կարս - Սարիղամիշ շրջանում դուրս գալ ռուսական զորքերի թիկունքը: Սակայն ռուս զինվորների ու հայ կամավորականների հերոսական կռիվների շնորհիվ օսմանյան 90-հազարանոց բանակը գլխովին ջախջախվեց: Հազիվ պրծնելով գերի ընկնելուց՝ Էնվերը ճողոպրեց դեպի Էրզրում, այնտեղից էլ՝ Կ. Պոլիս: Միայն 12000 հոգի օսմանյան զորքի մնացորդները հասան Էրզրում, մնացած 70000-ը սպանվեց կամ գերի ընկավ: Սարիղամիշի ճակատամարտին մասնակցել են Համազասպ Սրվանձտյանի գլխավորությամբ 3-րդ և Արշակ Գավաքյանի / Բեռի/ գլխավորած 4-րդ կամավորական ջոկատները:

Այնուհետև հայոց լեզվի և գրականության ուսուցիչն իր խոսքում նշում է, որ պատմվածքի սեղմ ընդգրկման մեջ Դեմիրճյանը ստեղծել է պատերազմի գոտում

հայտնված սահմանամերձ փոքրիկ քաղաքի, նրա բնակիչների և, մասնավորապես, Հաճի աղայի գերդաստանի հատկապես իր՝ Հաճի աղայի տպավորիչ կերպարները:

Պատմվածքի հերոսներն են Հաճի աղան, ով խանութպան է՝ 60-70 տարեկան, նրա 40-ամյա որդին՝ Շմավոնը, ով նույնպես խանութպան է, մյուս որդին՝ Հակոբը, կաղ գործակատարը, հարևան խանութպան Կորկոտենց Եղիշը, հյուսն Պողոսը, Հաճի աղայի աշակերտը, մեծ հարսը, փոքր հարսը՝ Եսթերը, Հաճի աղայի թոռները՝ Շողոն, Կարոն, Հաճի աղայի կինը՝ Հաճի մարը, Հաճի աղայի անդամալույծ քույրը՝ Սրբունը, հարևանի մի կին, զվարճաբան Գարանը, սահնակապանը, վանքի քահանան, խոստովանահայրը:

Հաճի աղան գործնական, հաշվենկատ և հպարտ մարդ է: Նա թեև առաջացած տարիքում է, բայց գերդաստանի ղեկը դեռևս նրա ձեռքում է:

Թշնամու առաջխաղացման լուրը լսելուն պես՝ նա արագ մտածում է, որ առաջինը լինելու պահն արդեն ձեռքից բաց է թողել: Այդ հապաղումն է պատճառը, որ նրա որդիները կարողանում են ոչ թե ֆուրգոն՝ ձիակառք, վարձել, այլ սահնակ: Նա կարգադրում է արագ հավաքել անհրաժեշտ իրերը:

Հաճի աղայի հետ էր ապրում նրա քույրը՝ Սրբունը, ով ամուսնու մահից հետո ծանր հիվանդացել էր և դարձել անդամալույծ: Հաճի աղան իր պատվի համար քրոջն անկյուն էր հատկացրել սեփական տանը: Սրբունը շատ բարի ու գթառատ կին էր և, որպեսզի տնեցիների համար հոգս չլիներ, կար ու կարկատանով օգնում էր նրանց:

Քաղաքը լքելու ու տնից հեռանալու պահին Հաճի աղայի հաշվենկատ միտքն այսպիսի վճիռ է կայացնում՝ ավելի լավ է իր խանութների ապրանքների մի մասը փրկել՝ ընտանիքը հետագայում սովի չմատնելու համար, քան իրենց հետ տանել անդամալույծ քրոջը: Ընտանիքը դեմ էր այդ վճռին, հատկապես Հաճի աղայի կինը՝ Հաճի մարը: Բայց Հաճի աղայի խոսքը օրենք էր:

Անդամալույծ քույրը շատ երախտագետ էր և մտահոգված էր եղբոր ճակատագրով. հանկարծ նրան մի բան չպատահի՞: Հրաժեշտի պահին, երբ եղբայրը ձեռքը դնում է քրոջ ձեռքին, Սրբունը, արցունքն աչքերին, նրան է նվիրում լավորակ բրդից հյուսված ձեռնոցը:

Տագնապալի պահերն անցնում են: Հաճի աղայի ընտանիքը փրկվում է: Լուրեր են հասնում, որ Սրբունը անհայտ կորել է: Կարելի է ենթադրել, որ կա՛մ թուրքերն են նրան սպանել, կա՛մ ինքնասպանությամբ ինքն է վերջ տվել իր կյանքին:

Հաճի աղան դրանից հետո ծանր հոգեբանական ապրումներ է ունենում: Նա խորապես զղջում է իր հաշվենկատ արարքի համար: Մի օր՝ առավոտ վաղ, արթնանում և գնում է եկեղեցի: Ոսկի է տալիս քահանային, նրան ոսկի է տալիս նաև աղքատներին բաժանելու համար:

Հաճի աղան հոգեպես արդեն կոտրվել էր: Նա անկողին է ընկնում, խոստովանահայր կանչում, կրկին գումարներ է շռայլում և մի քսակ ոսկի էլ տալիս է վերջում՝ ավելորդի հոգու համար:

Ավելորդը Սրբունն էր՝ իր հարազատ քույրը, անդամալույծը, ում համար նա տեղ չգտավ սայլակի մեջ: Բայց վերջում Հաճի աղան գիտակցում է ոչ թե Սրբունի, այլ ի՛ր ավելորդ լինելը և այդ գիտակցությամբ էլ ավարտում է կյանքը:

«Ավելորդը» պատմվածքը գրված է արձակին բնորոշ պատկեր-գործողություններով, որոնք շատ արագ հաջորդում են իրար:

Գլխավոր հերոսը Հաճի աղան է: Սեղմ, բայց ցայտուն են կերպավորված նաև նրա կինը՝ Հաճի մարը, որդիները, Սրբունը և մյուսները:

Դեմիրճյանն օգտագործել է Կարինի բարբառի Ախալքալաքի խոսվածքը, ինչն իր հերթին յուրովի կերպավորում է հերոսներին:

Այնուհետև ուսուցիչը հանձնարարում է կատարել կարճ գրավոր մեկնաբանություն՝ գեղարվեստական և իմաստային տեսակետից իրեն հետաքրքրող հատվածների մասին (5-րոպեանոց շարադրանք):

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ: Դասախոսությունը ավարտելուց հետո ուսուցիչը դասի այս փուլում դասարանը բաժանում է խմբերի և հանձնարարում է կարդալ օրվա դասի համապատասխան հատվածը, ապա յուրաքանչյուր խմբին տալիս է կատարելու առաջադրանքներ.

1. Համառոտ վերարտադրել Դերենիկ Դեմիրճյանի կյանքն ու գործունեությունը:
2. Ի՞նչ է պատմվածքը՝ որպես գրական ստեղծագործություն:
3. Ինչպիսի՞ պատմական ժամանակաշրջան է ներկայացնում գրողը:
   Ի՞նչ է նշանակում «թուրքը գալիս է» արտահայտությունը:
4. Ինչպե՞ս է սկսվում Դ. Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքը: Գրողը ինչպե՞ս է նկարագրում իր գլխավոր հերոսին՝ Հաճի աղային: Ի՞նչ հոգեվիճակում էր նա շուկայում:

5. «Ավելորդը» ստեղծագործությունը Դ. Դեմիրճյանի հոգեբանական պատմվածքներից է: Ինչո՞վ է արտահայտված այդ հոգեբանական կողմը:
6. «Ի՞նչ իրադարձությունների մեջ ենք տեսնում հերոսներին, ինչպե՞ս է գրողը կերպավորում նրանց: Բնութագրել նրանց և առանձնացնել գլխավոր և երկրորդական հերոսներին:

Հանձնարարությունն ավարտելուց հետո յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր դիտարկումները, կատարում է քննարկում, մտքերի փոխանակում և միավորային գնահատում:

Ուսուցիչը անդրադարձի միջոցով ամփոփում է դասը՝ նշելով սովորողների ձեռքբերումները և մատնանշում բացթողումները՝ շտկում կատարելու նպատակայնությամբ:

Հանձնարարվում է տնային աշխատանք:

****

ԹԵՄԱՆ՝ «Ավելորդը» պատմվածքի հերոսները: Պատմվածքում ծավալվող դեմքերի ու գործողությունների զարգացման ընթացքը ՝ դիպշարը (սյուժեն) (3-րդ հատվածը) :

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ՝

ԿԻՄԱՆԱ՝

- «Ավելորդը» պատմվածքի բովանդակությունը,
- Պատմվածքի ժանրային առանձնահատկությունները,
- Ընդհանրացնել և հակիրճ ձևակերպել ստեղծագործության հիմնական գաղափարը,
- Առանձնացնել կերպարները և բնութագրել բառերով ու բառակապակցություններով (ինչպիսի՞ն են):

ԿԿԱՐՈՂԱՆԱ՝

- Կարդալ ստեղծագործությունը, մտապահել ու սեփական բառերով վերարտադրել գործողությունների զարգացման ընթացքը,
- Համառոտ ներկայացնել «Ավելորդը» պատմվածքի դիպշարը,
- Թվարկել պատմվածքի հերոսներին,
- Բնութագրել գլխավոր հերոսին՝ մեկնաբանելով նրա արարքները,
- Բնութագրել դուր եկած հերոսներին:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ՝ «Հասկացությունների քարտեզ», «Մտածի՛ր, զույգ կազմի՛ր, մտքեր փոխանակի՛ր», «Ուղղորդված ընթերցանություն»:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ՝ Դասագիրք, քարտեր, նշագրիչներ, թուղթ:

ԴԱՍԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ՝ Նոր նյութերի յուրացման դաս:

ԽԹԱՆՈՒՄ: Դասի այս փուլում կիրառվում է **«Գաղափարների /հասկացությունների/ քարտեզ»** մեթոդական հնարը, որն օգնում է գիտակցված ձևով սովորելու, ընդունելու նոր տեղեկատվությունը և տեսողական պատկերի միջոցով ներկայացնելու , թե ինչպես են տվյալ ոլորտի գաղափարները փոխկապակցվում /10, 76/:

Դասը սկսվում է հետևյալ կերպ: Նախ՝ շրջանագծի մեջ է առնվում թեման՝ «Ավելորդը», այնուհետև այդ հասկացության շուրջ գրի են առնվում դրան ուղեկից բառերը:

Քարտեզի ճյուղերը տարածվում են նաև ցանկացած ուղեկից բառից դուրս բխելով: Ճյուղավորումների քանակը և բազմազանությունը կախված են նյութի ուսումնասիրման խորությունից, հետաքրքրությունների շրջանակից: Յուրաքանչյուր բառ գծիկով միանում է «ծնող բառի» հետ:

Քարտեզագրման ընթացքում առավելագույնս բազմաճյուղ պատկեր ստանալուց հետո առաջարկվում է օգտագործել պայմանական նշաններ, ինչպես ընդունված է քարտեզ կազմելիս: Ընդգծվում են այն գաղափարները, որոնց շուրջ անհրաժեշտ է լրացուցիչ տեղեկություն հավաքել: Խոշոր հարցական նշաններ են դրվում այն գաղափարների մոտ, որոնք անհրաժեշտ է ճշգրտել: Հաստատական որևէ նշան է դրվում այն բառերի մոտ, որոնց ուսումնասիրությունը բավարար կամ ավարտված են համարում: Որոշակի նշաններով առանձնացվում են հատուկ հետաքրքրություն ներկայացնող գաղափարները: Նշանների կիրառմանը կարելի է ստեղծագործաբար մոտենալ: Գծակարգը կլինի մոտավորապես այսպես, որը միտումնավոր մենք այլ բառով ենք լրացրել, քանի որ այն անպայման կտարբերվի մեր գրածից:

Մեթոդի կիրառումը հնարավորություն է տալիս գործընթացը դարձնելու ավելի հետաքրքիր՝ աշակերտների մոտ ստեղծելով առույգ աշխատանքային տրամադրություն:

Աշխարհագրության ուսուցիչը մտագրոհի միջոցով կրկնում է Հայաստանի մարզերն ու մարզկենտրոնները, գետերն ու լճերը:

Ահա խմբավորման օրինակ.



Այս աշխատանքն ավարտելուց հետո դասարանը բաժանվում է խմբերի, և յուրաքանչյուր խմբին տրվում է համապատասխան հանձնարարություն:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ: Այս փուլում կիրառվում է **«Ուղղորդված ընթերցանություն»** մեթոդը: Այս մեթոդը կիրառելի է իմաստի ընկալման փուլում /10, 28/:

«Կարդացածի ընկալման» մեջ մենք հաճախ նկատի ունենք այն, որ աշակերտը հիշողությամբ վերականգնում է փաստերը, անունները, գործողության տեղը, հիմնական իրադարձությունները:

Հասկանալը, ի տարբերություն ընկալման, մտածողության զարգացման ավելի բարձր աստիճան է, որը նկատի ունի այն, որ աշակերտը գիտակցել է տեքստում առաջ քաշած հիմնական գաղափարները, հարստացրել քննարկվելիք հարցի մասին սեփական գիտելիքը, անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործել տեքստի գաղափարը, նրանում հաղորդած տեղեկությունը և հայեցակարգերը: Այս դեպքում պարզ է դառնում, որ հիշողությամբ տեքստն ուղղակի վերականգնելը չի նշանակում այն հասկանալ:

Որպեսզի ընթերցումն օգտակար լինի, սովորողը պետք է կարողանա տեքստը հասկանալ և մեկնաբանել: Իսկ սա կհաջողվի միայն այն դեպքում, երբ աշակերտը այն կկապի իր կարդացածի և իր իմացածի հետ: Ուսուցչի կարևորագույն խնդիրը պետք է լինի օգնել աշակերտներին հաստատել այս կապը, մշակել գիտակցված ընթերցման ունակության ձևավորում, սովորեցնել՝ ինչպես որոշել ընթերցման նպատակը, ինչպես ստանալ կարդացածից հաճույք, ինչպես հաստատել տեքստի հետ կապը:

Ուսուցիչը խմբերին հանձնարարում է կարդալ «Ավելորդը» պատմվածքի 3-րդ հատվածը, ապա կիրառում **«Մտածի՛ր, զույգ կազմի՛ր, մտքեր փոխանակի՛ր»** վարժությունը:

Այս վարժությունն արագ կատարվող համատեղ ուսումնառության վարժություն է, որն օգնում է աշակերտներին մտածել, կշռադատել տեքստի շուրջ և ընկերների օգնությամբ հստակեցնել, ձևակերպել իրենց մտքերը: Ուսուցիչը նախօրոք թեմայի շուրջ հարցեր է պատրաստում, որոնք սովորաբար բաց բնույթ ունեն (միանշանակ պատասխան չեն ենթադրում), և աշակերտներին խնդրում է կրճատ գրել այդ հարցերի պատասխանները: Այսուհետև աշակերտները զույգեր են կազմում և միմյանց հետ մտքեր փոխանակում՝ փորձելով գտնել այն պատասխանը, որն ամբողջացնում է իրենց երկուսի կարծիքները, գաղափարները: Ապա ուսուցիչն առաջարկում է զույգերից մի քանիսին ներկայացնել իրենց քննարկումների արդյունքները /10, 83/:

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ: Այս փուլում ուսուցիչը խմբից յուրաքանչյուրին տալիս է հետևյալ հանձնարարությունները.

I ԽՈՒՄԲ – Ի՞նչ իրադարձությունների մեջ եք տեսնում հերոսներին, ինչպե՞ս է գրողը կերպավորում նրանց: Թվարկե՛ք անունները, բնութագրե՛ք նրանց և առանձնացրե՛ք գլխավոր և երկրորդական հերոսներին:

II ԽՈՒՄԲ – Պատմվածքից առանձնացրե՛ք այն հատվածները, որոնք ներկայացնում, բնութագրում են Հաճի աղային: Ո՞վ էր Հաճի աղան, կյանքի ինչպիսի՞ ճանապարհ էր անցել նրա գերդաստանը, ճակատագրական իրադրության մեջ ինչպե՞ս է նա կողմնորոշվում:

III ԽՈՒՄԲ – Սրբունը ե՞րբ էր անդամալույծ դարձել և ինչո՞ւ էր ապրում եղբոր տանը: Տան հոգսը թեթևացնելու համար ինչո՞վ էր զբաղվում նա: Ճանապարհի պատրաստության ժամանակ ինչո՞ւ էր լալիս Սրբունը:

IV ԽՈՒՄԲ – Երբ Հաճի աղան որոշում է Սրբունին թողնել, ընտանիքի անդամներն ի՞նչ վերաբերմունք են դրսևորում նրա վճռի կապակցությամբ, ինչպե՞ս կվարվեիք դուք: Ինչպե՞ս է Հաճի աղան հրաժեշտ տալիս քրոջը: Քույրն ի՞նչ է նվիրում նրան: Ձեր կարծիքն այդ կապակցությամբ:

Աշխատանքի համար հատկացված ժամանակը լրանալուց հետո խմբերը ներկայացնում են իրենց գրածները, կատարվում է քննարկում, մտքերի փոխանակում ու միավորային գնահատում:

Ուսուցիչն ամփոփում է թեման և հանձնարարում է տնային աշխատանք:

Օգտագործված գրականության ցանկ

1. Екжанова Е. А., Резникова Е. В. Основы интегрированного обучения : Учебное пособие для вузов . Текст предоставлен правообладателем http.//www.litres.ru Основы интегрированного обучения : пособие для вузов / Е. А. Екжанова, Е. В. Резникова: Дрофа. Москва, 2008-ISBN 978-5-358-0465-1-210.
2. Браже Т. Г. , Интеграция предметов в современной школе. / Летература в школе. N5, 1996, с. 59-63.
3. Մելանյա Աստվածատրյան, Անահիտ Արնաուդյան, Սիրամարգ Վարդումյան, Իզաբելլա Օհանովա, Ռուբեն Պետրոսյան, Լենա Երեմյան, ‹‹Ինտեգրված թեմատիկ միավորներ››, Երևան, 2003թ., 256 էջ:
4. Зверев Д. И., Взаимная связь учебных предметов, М., Знание, 1977, с. 64-69.
5. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980, 564 էջ:
6. «Հայոց լեզու և գրականություն» ծրագրեր. հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչներ ու ծրագրեր, Երևան, 2007:
7. Седов И.А., Компьютерная игра как средство саморазвития будущего учителя в условиях информатизации общества, 2002, с. 2.
8. Սարգսյան Տ., Համակարգչային խաղերը ինտեգրացված ուսուցման գործընթացում, ԿԱԻ, Մանկավարժություն, Երևան, 2011:
9. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=149788
10. Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Կրթության ազգային ինստիտուտ /Լոռու մասնաճյուղ/, ք. Վանաձոր, 2008թ., 101 էջ: